ՎՐԱՍՏԱՆԻ ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ԴԱՇՏԸ

Կարեն Վերանյան

Համաձայն 2005թ. մարտին «Գորբի» սոցիոլոգիական հետազոտությունների կենտրոնի իրականացրած սոցհարցման արդյունքների, Վրաստանի հասարակական կարծիքը կտրուկ փոփոխություններ է կրել. նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ, *կրկնակի* (84%-ից հասել է 39%-ի) նվազել է երկրում ընթացող զարգացումներից գոհ բնակիչների թիվը: Սակայն ընդդիմադիրների շարքերում, տարբեր ամբիոններից հնչած քննադատական ելույթներից ու հայտարարություններից զատ, էական քայլեր իսկապես չարձանագրվեցին: Սա, թերևս, կարելի է բացատրել մի քանի տեսանկյունից. նախ, ընդդիմադիր դաշտը գաղափարական ու քաղաքական մոտեցումների առումով բավական բազմատարր է: Այս հարցում մեծ է ինչպես Միացյալ Նահանգների ու Ռուսաստանի, այնպես էլ ԵՄ գործոնը:

Կարելի է փաստել, որ Վրաստանի ընդդիմադիր դաշտում ներկայացված ուժերի զգալի մասը գաղափարական մոտեցումների ու քաղաքական հայացքների տեսանկյունից առանձնանում է ավելի շատ կողմերի տարակարծությամբ, քան ընդհանրություններով: Ընդդիմությունում ներկայացված են ուժեր, որոնք աշխատել են Զվիադ Գամսախուրդիայի հետ (զվիադականներ) և բավական արմատական են տրամադրված թե՛ Շևարդնաձեի և թե՛ գործող իշխանությունների նկատմամբ: Ընդդիմադիրների շարքերը համալրում են նախկին նախագահ Շևարդնաձեի համախոհները: Առանձին պետք է դիտարկել այն ընդդիմադիր առաջնորդներին, որոնք (հանրապետականներ, պահպանողականներ) Սահակաշվիլու հետ միասին կամ «Բուրջանաձե-ժողովրդավարներ» դաշինքի կազմում ակտիվ մասնակցություն են ունեցել 2003թ. նոյեմբերյան իշխանափոխությանը, սակայն հետագայում ծագած տարակարծությունների պատճառով լքել են իշխանության շարքերը:

Երկրորդ, ընդդիմադիր դաշտում քաղաքական հայացքներով համեմատաբար միմյանց հարող առաջնորդների միավորմանն ու առաջատարությանը խանգարում են նրանց անձնական հավակնությունները, որոնք, թերևս, առավել կդրսևորվեն միասնական թեկնածուի հավանական առաջադրման ժամանակ:

Երրորդ, ընդդիմադիրների տարբեր թևերում դեռևս հստակ մշակված և առաջադրված չեն երկրի զարգացման միասնական տեսլականները, հավանական իշխանափոխությունից հետո նրա քաղաքական հեռանկարները:

Եվ չորրորդ (թերևս, կարևորագույն գործոններից մեկը), երկրի ընդդիմության չկայացման և անհամախմբվածության էական պատճառներից մեկն էլ գործող իշխանությունների

կողմից նրա նկատմամբ *որոշակի վերահսկողության* իրականացումն է: Մամուլում բազմիցս է շահարկվում, թե ընդդիմադիր թևի կուսակցությունները և ակտիվ ներկայացուցիչներից ոմանք հանդես են գալիս իբրև զուտ *արհեստածին* ընդդիմություն, որոնք գաղտնի համագործակցում են գործող ղեկավարության հետ:

«Վրաստանի Լեյբորիստական կուսակցություն». - Ընդդիմադիր ուժերի միավորման հարցում լուրջ քայլեր, թերևս, սկսել է ձեռնարկել Շալվա Նաթելաշվիլու գլխավորած ոչ խորհրդարանական «Վրաստանի Լեյբորիստական կուսակցությունը»: Վերջինս երկրի ազդեցիկ և ընդգծված ընդդիմադիր ուժերից է, ունի արտաքին կապերի լայն շրջանակ, հանդիսանում է թե՛ գործող ղեկավարության և թե՛ Շևարդնաձեի իշխանության ընդդիմադիրը:

Նաթելաշվիլին ընդդիմադիր դաշտում, թերևս, այն միակ առաջնորդն է, որը նախագահ Սահակաշվիլուն հրավիրել է հեռուստաբանավեճի: Ընդդիմադիր առաջնորդը բավական մեծ հեղինակություն է վայելում երկրի թե՛ քաղաքական և թե՛ հասարակական շրջանակներում: «Գորբի» սոցիոլոգիական հետազոտությունների կենտրոնի իրականացրած սոցհարցման արդյունքների (2005թ. մարտ) համաձայն, Վրաստանի ընդդիմադիր քաղաքական կուսակցությունների շարքում վարկանիշային ամենաբարձր ցուցանիշներով առանձնացել է Լեյբորիստական կուսակցությունը՝ 7,2%, որին հաջորդում է խորհրդարանական «Նոր աջեր» խմբակցությունը՝ 4,3%: Սոցհարցման արդյունքները ցույց են տալիս նաև, որ Վրաստանի նախագահի ենթադրյալ թեկնածուների վարկանիշային ցուցանիշներով Շալվա Նաթելաշվիլին (5,4%) երրորդ սանդղակում է՝ Սահակաշվիլուց (38,1%) և Նինո Բուրջանաձեից (7,1%) հետո:

2003թ. նոյեմբերի 2-ին Վրաստանում կայացած խորհրդարանական ընտրություններին խորհրդարան անցնելու համար անհրաժեշտ 7%-անոց արգելքը հաղթահարել էր նաև Լեյբորիստական կուսակցությունը՝ ստանալով ընտրաձայների 12.04%-ը (229.900 ձայն): Այն զիջեց միայն Շևարդնաձեի գլխավորած «Հանուն նոր Վրաստանի» դաշինքին (21.39 % – 407.045 ձայն), Աբաշիձեի առաջնորդած «Ժողովրդավարական վերածննդի միությանը» (18.84%– 359.769 ձայն) և «Սահակաշվիլի-Ազգային շարժում» դաշինքին (18.8% – 345.197 ձայն): Նշենք նաև, որ լեյբորիստները հավաքած քվեներով առաջ էին անցել նույնիսկ «Բուրջանաձե-Ժողովրդավարներ» դաշինքից (ընդամենը 8.79% - 167.908 ձայն): Նոյեմբերյան իշխանափոխությունից հետո՝ մարտի 28-ին կայացած արտահերթ խորհրդարանական ընտրություններին, Լեյբորիստական կուսակցությունը, չընդգրկվելով որևէ դաշինքի կազմում, չկարողացավ հաղթահարել խորհրդարան անցնելու համար անհրաժեշտ 7%-անոց արգելքը:

Վերջին ամիսներին Նաթելաշվիլին երկրի ներքաղաքական դաշտում առանձնացել է ավելի շուտ գործնական նախաձեռնություններով, այլ ոչ թե միայն հնչեցվող քննադատական հայտարարություններով (ինչն, ի դեպ, հատուկ է ընդդիմադիրներից շատերին): Դեռևս 2005թ. ապրիլի 21-ին Լեյբորիստական կուսակցության ներկայացուցիչները նախաձեռնեցին նախագահ Սահակաշվիլու հրաժարականի ու արտահերթ ընտրությունների անցկաց-

ման պահանջով ստորագրահավաք:

Նաթելաշվիլին սերտ կապեր ունի Արևմուտքում, նաև ռուս-վրացական հարաբերությունների բարելավման կողմնակից է (վրացի քաղաքական գործիչներից ոմանք նրան նույնիսկ ռուսական հատուկ ծառայությունների գործակալ են որակել): Լեյբորիստ առաջնորդի կերպարը բավական ընդունելի է մասնավորապես Վաշինգտոնում: Հարկ է նշել, որ կուսակցության հետ *քաղաքական խորհրդատվությունների ծրագրի* շրջանակներում ակտիվորեն համագործակցում է ամերիկյան Միջազգային հանրապետական ինստիտուտը (*International Republican Institute - IRI*):

2004թ. դեկտեմբերի 4-ին Նաթելաշվիլին ԱՄՆ կառավարության հրավերով ու ֆինանսավորմամբ եռօրյա այցով գտնվում էր Միացյալ Նահանգներում, որտեղ նա հանդիպել էր Սպիտակ տան, Անվտանգության խորհրդի, Կոնգրեսի ու պետքարտուղարության բարձրաստիճան պաշտոնյաների, ինչպես նաև Նիքսոնի, Մորգանի կենտրոնների ու Ռոկֆելերի հիմնադրամի ներկայացուցիչների հետ: Ընդդիմության ներկայացուցիչն ԱՄՆ-ում ներկայացնելու էր Վրաստանի գործող ղեկավարության մասին իր քննադատական մոտեցումները, ինչպես նաև փորձելու էր խորացնել հարաբերությունները ամերիկյան պաշտոնյաների հետ:

Նկատենք, որ ընդդիմադիր առաջնորդի ԱՄՆ կատարած այցը զուգադիպել էր այդ երկիր նախկին վարչապետ Զ.Ժվանիայի այցելությանը (Ժվանիան 5-օրյա այցով մեկնել էր ԱՄՆ ընդամենը մեկ օրվա տարբերությամբ՝ դեկտեմբերի 5-ին), որի մասին քիչ խոսվեց մամուլում: Չպետք է բացառել, որ այդ հանգամանքը վկայում է Ժվանիայի և Նաթելաշվիլու միջև ձեռք բերված որոշակի պայմանավորվածությունների (զուցե համատեղ աշխատելու՝ ի հակակշիռ Սահակաշվիլու) մասին: Ուշագրավ է, որ այդ այցի ընթացքում Վրաստանի նախկին վարչապետը տարբեր երկրների քաղաքական կուսակցություններին և առաջնորդներին գործնական աջակցություն ցուցաբերող ամերիկյան հեղինակավոր «Ազգային ժողովրդավարական ինստիտուտի» *(National democratic institute for foreign affairs - NDI)* կողմից պարգևատրվեց Հարիմանի մրցանակով:

Ի դեպ, ԱՄՆ նախագահի՝ Վրաստան կատարած այցից հետո, մայիսի կեսերին ԱՄՆ կառավարության հրավերով ընդդիմադիր առաջնորդ Շալվա Նաթելաշվիլին Վրաստանում առկա իրադրությանը նվիրված ելույթով հանդես եկավ հեղինակավոր Նիքսոնի կենտրոնում[1]:

«Վրաստան, առաջ» և «Ապագայի կառավարություն» հասարակական շարժումներ. - Լեյբորիստական կուսակցության ակտիվ միջամտությամբ գաղափարակից ընդդիմադիր ուժերի միավորման առաջին լուրջ փորձերը հաջողությամբ պսակվեցին 2005թ. մարտի կեսերին, երբ լեյբորիստներն ընդգրկվեցին ընդդիմադիր «Վրաստան, առաջ» (Իրակլի Բաթիաշվիլու գլխավորությամբ[2]) և «Ապագայի կառավարություն» (Գիա Մաիսաշվիլի) հասարակական

[1] http://www.newsgeorgia.ru/news.html?nws_id=393268, «Лидер оппозиционной Лейбористской партии Грузии приглашен в США, где собирается выступить в Центре Никсона», 12.05.2005г.

[2] Շևարդնաձեի իշխանության տարիներին զբաղեցրել է Վրաստանի խորհրդարանի պաշտպանության ու անվտանգության հանձնաժողովի նախագահի պաշտոնը:

շարժումների հետ համատեղ ստեղծված կոորդինացիոն խորհրդի կազմում: Նորաստեղծ խորհրդի առաքելությունն է Վրաստանի խորհրդարանի և կառավարության արտահերթ ընտրությունների անցկացումը[1]: Նկատի առնելով այն, որ Լեյբորիստական կուսակցությունը որևէ այլ ուժի հետ մինչ օրս դաշինք չի կազմել, ուստի ընդդիմության այս ուժերի միավորմանը լեյբորիստների մասնակցությունը պետք է ընդունել որպես նախադեպ:

Նորաստեղծ «Վրաստան, առաջ» շարժումը (հիմնադրվել է 2004թ. դեկտեմբերի 24-ին, ներկայում ընդգրկում է շուրջ 10.000 անդամ) իր առջև խնդիր է դրել լուծել երկրի ներքաղաքական խնդիրները, առկա հակամարտությունները, երկրում զարգացնել ժողովրդավարական ու ազգային արժեքներ և դրանց շուրջ համախմբել հայրենասեր ուժերին: Դատելով նախկինում հնչեցրած իր հայտարարություններով՝ Բաթիաշվիլին առանձնացել է հակառուսական քաղաքական հայացքներով: Ընդդիմադիր առաջնորդը կապեր ունի ԱՄՆ-ում, նախկինում բազմիցս հանդես է եկել Իսրայելի հետ Վրաստանի հարաբերությունների խորացման օգտին: 2002թ. դեկտեմբերի 16-ին հնգօրյա աշխատանքային այցով Իսրայել մեկնած Վրաստանի խորհրդարանական պատվիրակության կազմում էր նաև Բաթիաշվիլին (այդ ժամանակ հարում էր նաև Դավիթ Գամկրելիձեի գլխավորած «Նոր աջեր» կուսակցությանը): Քնեսեթում Իսրայելի փոխվարչապետ Նաթան Շարանսկու հետ հանդիպման ընթացքում Բաթիաշվիլին մասնավորապես նշեց. «Մեր կուսակցությունը (*«Նոր աջեր» - խմբ.»*) հետևողականորեն քարոզում է Իսրայելի շահերը», «մեր երկիրն ուզում է դառնալ Իսրայելի հուսալի դաշնակիցը»:

Քաղաքական դաշտում «Վրաստան, առաջ» հասարակական շարժման ներկայացուցիչները բավական ակտիվացել էին մասնավորապես ԱՄՆ նախագահ Բուշի՝ Վրաստան կատարած այցի նախաշեմին: Մասնավորապես, նրանք բաց նամակ էին ուղարկել վերջինիս, որում բացասական գնահատական էին տվել երկրի ներկայիս իրադրությանը: Շարժման ղեկավարությունը նամակում վստահություն էր հայտնել, որ այցի ընթացքում ԱՄՆ նախագահը կհանդիպեր ոչ միայն գործող ղեկավարության, այլև ընդդիմության ազդեցիկ ներկայացուցիչների հետ:

Ս.թ. հունիսի 6-ին Մոսկվայում կայացած մամուլի ասուլիսում «Վրաստան, առաջ» շարժման առաջնորդներ Իրակլի Բաթիաշվիլին ու Մալխազ Գուլաշվիլին[2] հանդես եկան Վրաստանի իշխանությունների վարած արտաքին քաղաքականությանն ուղղված քննադատական հայտարարությամբ: Հայտարարությունում մասնավորապես նշվում էր. «*Հետխորհրդային տարածքում «գունավոր հեղափոխությունների» սադրանքը չպետք է լինի Վրաստանի աշխարհաքաղաքական գործառույթը*»: Նրանց խոսքերով, Վրաստանի ղեկավարությունը պետք է առաջին հերթին զբաղվի երկրում առկա հակամարտությունների կարգավորման խնդիրներով, իսկ դա, առաջին հերթին, Վրաստանի ու Ռուսաստանի միջև առկա հակամարտության հետևանք է: Բաթիաշվիլին Վրաստանի իշխանություններին մասնավորապես կոչ

[1] http://www.newsgeorgia.ru/news.html?nws_id=365743, «Оппозиция создала координационный совет с целью проведения внеочередных выборов в парламент Грузии», 18.03.2005г.
[2] Մալխազ Գուլաշվիլին «*Georgian Times*» մեդիա-հոլդինգի նախագահն է:

արեց նախնառաջ կարգավորել ռուս-վրացական հարաբերությունները:

Որոշ վերլուծաբաններ նույնիսկ գտնում են, որ ռուսական կողմը ներկայում փորձում է *աշխատել* Բաթիաշվիլու հետ՝ վերջինիս հունիսյան հայտարարությունը դիտելով *ռուսական նախաձեռնությանը* ընդդիմադիր առաջնորդի ընդառաջ գնալու համատեքստում: Նկատենք, որ մոսկովյան մամուլի ասուլիսում ընդդիմադիր առաջնորդները նշեցին, որ «*Ռուսաստանում իրենք աջակցություն չեն փնտրում*»:

Կարելի է ասել, որ «Վրաստան, առաջ» շարժման ղեկավարների հայտարարությունն, ըստ էության, վերաբերում է Վրաստանի ներքին խնդիրների կարգավորումը մեծ հաշվով ռուսական գործոնով պայմանավորելու հարցին: Այն ընդգծում է երկրի արտաքին քաղաքականության միանշանակությունը, ինչը և ենթադրում է Արևմուտքից երկրի կախվածության մեծացում:

Ինչ վերաբերում է ընդդիմադիր մյուս առաջնորդ Գիա Մաիսաշվիլուն (վերջինս ժամանակին եղել է Մ.Սահակաշվիլու կողմնակիցը[1]), ապա նա, վերջին 10 տարիների ընթացքում բնակվելով Միացյալ Նահանգներում, բավական ակտիվ շփումներ է հաստատել այնտեղ: Ուշագրավ է, որ 2004թ. հունիսի սկզբին Մաիսաշվիլին մեկնել էր Միացյալ Նահանգներ՝ մասնակցելու ԱՄՆ նախագահական ընտրություններում նախագահի թեկնածու Ջոն Քերիի նախընտրական արշավին[2]:

2005թ. մարտի 21-ի տվյալներով, վրացական ընդդիմադիր «Ապագայի կառավարություն» հասարակական շարժումը մտադիր էր ստեղծել երիտասարդ առաջնորդների վերապատրաստման ուսուցման կադրային ինստիտուտ («Երիտասարդ առաջնորդների դպրոց»): Նախատեսվում է, որ երիտասարդ առաջնորդների ուսուցման նախաձեռնությանը ներգրավվելու են ամերիկյան փորձագետներ[3]:

Վերջերս «Ապագայի կառավարության» հետ խորհրդակցություններ անցկացնելու մտադրություն են հայտնել նաև Վրաստանի առաջին նախագահ Զվիադ Գամսախուրդիայի որդու՝ Կոնստանտին Գամսախուրդիայի գլխավորած «Ազատություն» քաղաքական միավորման ներկայացուցիչները: Վերջիններիս նպատակն է ստեղծել ուժեղ ընդդիմություն, որը կարող է հակազդել իշխանական «Միացյալ ազգային շարժում» կուսակցությանը:

Չափավոր ընդդիմադիրներ

Պահպանողական և Հանրապետական կուսակցություններ. - Վրաստանի ընդդիմադիր դաշտում քիչ չեն այն ուժերը, որոնք գործող իշխանությունների նկատմամբ համեմատաբար մեղմ դիրքորոշում ունեն և դասվում են *չափավոր ընդդիմության* շարքին:

Չափավոր ընդդիմադիրներից անհրաժեշտ է նախնառաջ առանձնացնել վերջերս

[1] http://www.sinfo.ru/ru/main/focus/news/detail.shtml?id=21324, «Один из бывших соратников Саакашвили назвал правительство Грузии» единением амбициозных, не знающих дело людей», 20.12.2004г.
[2] http://www.newsgeorgia.ru/news.html?nws_id=265586, «Грузинский политолог-экономист примет участие в предвыборной кампании Джона Керри», 03.06.2004г.
[3] http://www.newsgeorgia.ru/print_version.html?nws_id=366628, «Грузинское оппозиционное общественное движение «Правительство будущего» намерено создать «Школу молодых лидеров», 21.03.2005г.

միավորված «Ազգային ուժերի միավորում»-Պահպանողականներ (պահպանողականներ) և Հանրապետական կուսակցություններին: Պահպանողականների կուսակցության առաջնորդներ Զվիադ Զիձիգուրին ու Կոբա Դավիթաշվիլին (Սահակաշվիլու գլխավորած «Ազգային շարժում» կուսակցության նախկին գլխավոր քարտուղար) Սահակաշվիլու հետ համատեղ զգալի մասնակցություն են ունեցել նոյեմբերյան իշխանափոխությանը, սակայն հետագայում ծագած հակասությունների արդյունքում հեռացել են իշխանությունից: Կուսակցությունը երկրի խորհրդարանում ներկայացված է մի քանի պատգամավորներով:

Ներքաղաքական դաշտում պահպանողականներից էապես չեն տարբերվում Հանրապետական կուսակցության ներկայացուցիչները: Միայն 2004թ. հունիսի վերջին կուսակցության 4 առաջնորդները՝ Դավիթ և Լևան Բերձենեշվիլիները, Իվլիան Խաինդրավան (Վրաստանի հակամարտությունների կարգավորման հարցերով պետնախարար Գեորգի Խաինդրավայի եղբայրը) և Թեյմուրազ Ներգաձեն, նախորդ տարվա աջարական ճգնաժամի պատճառով դուրս եկան իշխանական «Ազգային շարժում-ժողովրդավարներ» խմբակցությունից:

Կուսակցության առաջնորդների շարքում առանձնանում են Դավիթ Բերձենեշվիլին և Իվլիան Խաինդրավան: Վերջինս 1992թ. մայիսին ընտրվել է Հանրապետական կուսակցության ազգային կոմիտեի անդամ, 1996թ.՝ կուսակցության նախագահ: 1997-2000թթ. Բերձենեշվիլին ստանձնել է կուսակցության փոխնախագահի պաշտոնը, 2001-ից ի վեր նրա նախագահն է:

Վրաստանի իշխանությունների նկատմամբ առավել կոշտ դիրքորոշում ունեցող ընդդիմադիրների մի մասը որոշակի թերահավատությամբ է մոտենում թե՛ պահպանողականներին և թե՛ հանրապետականներին: Նրանց հաճախ են որակում որպես «*երկրի նախագահի պահեստային ուժեր*», ինչը, թերևս, զուրկ չէ տրամաբանությունից:

Վերջին երկու ամիսների ընթացքում *նախկին իշխանականները* սկսել են ակտիվորեն համագործակցել ընդդիմադիր այլ ուժերի հետ: Մասնավորապես, 2005թ. մարտի 11-ին «Ազգային ուժերի միավորում»-Պահպանողականներ կուսակցությունը և «Կանանց պաշտպանության միությունը» (առաջնորդ՝ Նագրիզա Գվաիլիա) հայտարարեցին իրենց միավորման մասին[1]:

«Աջ ընդդիմություն. Արդյունաբերողներ-նորեր» խմբակցություն. - Պահպանողականներից ու հանրապետականներից զատ, անհրաժեշտ է առանձնացնել Դավիթ Գամկրելիձեի գլխավորած ընդդիմադիր խորհրդարանական «Աջ ընդդիմություն. Արդյունաբերողներ-նորեր» խմբակցությունը: Գամկրելիձեն ընդդիմադիրների շարքում, թերևս, այն միակ առաջնորդն է, որը հաճախ առանձնացել է ընդգծված սուր հակաիշխանական քննադատություններով (Գամկրելիձեի քննադատությանն են ենթարկվել հատկապես նախագահ Սահակաշվիլին, նախկին վարչապետ Ժվանիան, պաշտպանության նախարար Օկրուաշվիլին, լար-

[1] http://www.newsgeorgia.ru/news.html?nws_id=361996&date=2005-03-11, Партия «Консерваторов» и «Союз защиты женщин» объявили о своем объединении, 11.03.2005г.

ված հարաբերություններ ունի մասնավորապես տնտեսական բարեփոխումների պետնախարար Բենդուկիձեի հետ)։

Վերլուծաբանների մի մասը, ելնելով ընդդիմադիր գործչի հակաիշխանական քաղաքական հայացքներից, նրան դասում է Վրաստանի ընդդիմության արմատական թևի ներկայացուցիչների շարքին։ Ռուս-վրացական ներկայիս լարված հարաբերությունների համատեքստում ԶԼՄ-ում նրան համարում են Վրաստանի գործող ղեկավարության արմատական ընդդիմադիր, որի քաղաքական կերպարն ընդունելի է Մոսկվայում։ Սակայն խոշոր հաշվով Մոսկվան կարող է Գամկրելիձեին ընդունել ոչ թե որպես Վրաստանի ղեկավարության ընդդիմադիր, այլ իբրև *հռետոր*։

Մյուս կողմից՝ Գամկրելիձեի ելույթները, իշխանական թևում իրականում գրեթե որևէ արձագանք չգտնելով, մի տեսակ արհեստական խաղի են վերածվում։ Ընդդիմադիր ղեկավարի գործնական քայլերը բավական պասիվ են և համահունչ չեն նրա հակաիշխանական ընդգծված քաղաքական հայացքներին։ Տրամաբանական պետք է համարել, թերևս, այն տեսակետը, ըստ որի Գամկրելիձեն գործող իշխանությունների տեսանկյունից համեմատաբար ընդունելի կերպար է, որի հետ վերջիններս պատրաստ են բանակցել կլոր սեղանի շուրջ։ Պատահական չէ, որ մայիսի 10-ին Վրաստան կատարած այցի ընթացքում ԱՄՆ նախագահ Ջ.Բուշի հետ հանդիպած Վրաստանի խորհրդարանի պատգամավորական խմբի կազմում, Հանրապետական ու Պահպանողական կուսակցություններից զատ, ընդգրկվել էր նաև Գամկրելիձեի գլխավորած կուսակցական խումբը (ըստ որոշ աղբյուրների՝ երկրի ընդդիմությունից միայն Գամկրելիձեն է ներկա գտնվել մայիսի 10-ին Վրաստանի խորհրդարանի շենքի հրապարակում կայացած ԱՄՆ նախագահի հանդիպման հանդիսավոր արարողությանը)։

Հետաքրքրական է, որ 2003թ. նոյեմբերի 2-ի խորհրդարանական ընտրություններին Գամկրելիձեի գլխավորած «Նոր աջեր» դաշինքը ընտրաձայների հարաբերակցությամբ անցել էր ընդամենը 6-րդ սանդղակը՝ ստանալով քվեների 7.35%-ը (խորհրդարան անցնելու համար անհրաժեշտ 7%-անոց արգելքի նախաշեմ)։ Իսկ 2004թ. մարտի 28-ի արտահերթ ընտրություններին 7%-անոց արգելքը կարողացան հաղթահարել միայն «Ազգային շարժում-Ժողովրդավարներ» և Գամկրելիձեի առաջնորդած դաշինքները՝ համապատասխանաբար ստանալով 67.2% և 7.62% ընտրաձայներ։

«Վրաստանի ավանդականների միություն» - «Ազգային-ժողովրդավարական կուսակցություն» զույգը. - Ընդդիմադիր «Վրաստանի ավանդականների միության» ստեղծման պատմությունը թվագրվում է դեռևս 1942թ.։ Այդ թվականին Գերմանիայում վրացի վտարանդիների մի խումբ հիմնադրեց այն։ Վրաստանում գործունեությունն սկսել է 1990թ. գարնանը՝ Ակակի Ասաթիանու գլխավորությամբ։ Վերջին Վրաստանի առաջին նախագահ Զվիադ Գամսախուրդիայի իշխանության տարիներին (1991-1992թթ.) գլխավորել է երկրի խորհրդարանը (Գերագույն խորհուրդ)։ Ակակի Ասաթիանին (զվիադական) Էդ. Շևարդնաձեի

իշխանության տարիներին նույնպես համալրել է երկրի ընդդիմության շարքերը: 1999թ. հուլիսի 10-ին Բաթումում, Աջարիայի Ինքնավարության նախկին առաջնորդ Ա.Աբաշիձեի գլխավորած «Ժողովրդավարական միությունը», «Վրաստանի ավանդականների միությունը» և ևս երեք կուսակցություններ («Ժողովրդական կուսակցությունը», «21-րդ դար» դաշինքը և «Վրաստանի սոցիալիստական կուսակցությունը») ստորագրեցին քաղաքական դաշինքի ստեղծման մասին հռչակագիր: 1999թ. Վրաստանի խորհրդարանական ընտրություններին մասնակցելիս դաշինքը վերանվանվեց «Վրաստանի վերածնունդ», որի առաջնորդ ընտրվեց Ասլան Աբաշիձեն: Հետագայում «Վրաստանի ավանդականների միությունն» առանձնացավ Աբաշիձեի քաղաքական միավորից:

Լինելով Շևարդնաձեի իշխանության ընդդիմադիր՝ 2003թ. նոյեմբերի 2-ին նշանակված խորհրդարանական ընտրություններին «Վրաստանի ավանդականների միությունն» ընդգրկվել էր «Բուրջանաձե-Ժողովրդավարներ» նախընտրական դաշինքի կազմում՝ համարվելով նրա առաջատար ուժերից մեկը: Ասաթիանին դաշինքի ընտրացուցակում զբաղեցնում էր երրորդ հորիզոնականը: Նա ակտիվորեն մասնակցել է նոյեմբերյան իշխանափոխությանը, սակայն հետագայում «Ազգային շարժում» և «Բուրջանաձե-Ժողովրդավարներ» դաշինքի կողմից նախագահի պաշտոնում Սահակաշվիլու թեկնածության առաջադրման պատճառով (Ասաթիանին նախագահի պաշտոնում նպատակահարմար էր տեսնում Նինո Բուրջանաձեին) «Վրաստանի ավանդականների միությունը» դուրս եկավ «Բուրջանաձե-Ժողովրդավարներ» դաշինքից: Իշխանափոխությունից հետո սա, թերևս, առաջին լուրջ քաղաքական պառակտումն էր:

Դաշինքից Ասաթիանու հեռացումը Սահակաշվիլու անձով պայմանավորելուց զատ, անհրաժեշտ է դիտարկել նաև նոյեմբերյան իշխանափոխությանը հաջորդած իրավիճակի համատեքստում, երբ իշխանական պայքարն իշխանություն-ընդդիմություն դաշտից տեղափոխվեց նորաստեղծ իշխանության շարքերը: Այս տեսանկյունից Ասաթիանու հեռացումը կարելի է դիտարկել որպես վերջինիս նկատմամբ «Բուրջանաձե-Ժողովրդավարներ» դաշինքի գործադրած ճնշման արդյունք:

Բավական ուշագրավ է վերջին ամիսներին Ասաթիանու ակտիվ գործունեությունը հասարակական ասպարեզում: Մասնավորապես, ս.թ. մարտի 30-ին նրա նախաձեռնությամբ հիմնադրվեց «Ժողովրդական ֆորում» հասարակական շարժումը (շարժման նախաձեռնողներից են նաև ընդդիմադիր «Վրաստանի Ազգային-ժողովրդավարական կուսակցության» ներկայացուցիչները և այլ ընդդիմադիր ուժեր), որը նպատակ ունի համախմբել երկրի հասարակական ուժերը, այլընտրանք ստեղծել գործող իշխանություններին:

Չպետք է բացառել նաև այն սցենարը, ըստ որի՝ անցնելով Վրաստանի ընդդիմության շարքերը՝ «Վրաստանի ավանդականների միության» առաջնորդը *տիպիկ ընդդիմադիր կեցվածք* է ընդունել իշխանության, թերևս, միայն սահակաշվիլիական թևի նկատմամբ: Խնդիրն այն է, որ նոյեմբերյան իշխանափոխությունից հետո երկրի ընտրանում հաստատվել էր երկփեղկված իշխանություն՝ ի դեմս Սահակաշվիլու և Ժվանիա-Բուրջանաձե զույգի: Իշխա-

նության գալուց հետո երկու հակադիր ուժերը փորձեցին լավագույնս օգտագործել *ներքին ռեսուրսները*՝ գալիք խորհրդարանական ու նախագահական ընտրությունների նախաշեմին սեփական դիրքերն ամրապնդելու հեռահար մտադրությամբ: Ուստի տրամաբանությունից հեռու չէ այն տեսակետը, թե Ասաթիանու՝ «Բուրջանաձե-Ժողովրդավարներ» դաշինքից հեռացումն արդյունք էր ոչ այնքան նրանց միջև ծագած անհարթությունների, որքան, ի հակակշիռ Սահակաշվիլու, ընդդիմադիր դաշտում ևս «Բուրջանաձե-Ժողովրդավարներ» դաշինքի դիրքերի ամրապնդման: Չպետք է մոռանալ, որ, ինչպես վերը նշվեց, նման միտում արձանագրվել է նաև Սահակաշվիլու թիմակիցների պարագայում, միևնույն ժամանակ չբացառելով, որ Ասաթիանին կարող է առաջ տանել իր առանձին քաղաքական գիծը:

Ինչ վերաբերում է Ասաթիանու քաղաքական հայացքներին, ապա դրանք ունեն բավական հակառուսական բնույթ, հաճախ ուղղակի չեն տարբերվում գործող իշխանությունների դիրքորոշումից: Ժամանակին (2000թ.) իր հայտարարություններից մեկում ընդդիմադիր ղեկավարը Ռուսաստանի կողմից Վրաստանի հետ մուտքի թույլտվության հաստատման (վիզային ռեժիմ) կապակցությամբ ԱՊՀ կազմից Վրաստանի դուրս գալու կողմ հանդես եկավ: Իսկ 2001թ. սեպտեմբերին Ասաթիանին հայտարարում էր Չեչնիայի անկախության ճանաչման իր պատրաստակամության մասին:

Կարելի է ասել, որ Ասաթիանու հայացքներն առավել արևմտամետ են և, մասնավորապես, հարում են նրա եվրոպական թևին: 2005թ. ապրիլին ընդդիմադիր առաջնորդը հայտարարեց, թե Վրաստանում պետք է հաստատվի խորհրդարանական հանրապետություն, քանզի նախագահական կառավարման համակարգն իրեն չի արդարացնում և հանգեցնում է նախագահական դիկտատուրայի: Ի դեպ, խորհրդարանական կառավարման համակարգը հաջողությամբ գործում է հենց եվրոպական իրականությունում:

Վրաստանում նոյեմբերյան իշխանափոխությունից հետո 2004թ. մարտի 28-ին նշանակված արտահերթ խորհրդարանական ընտրություններին «Վրաստանի ավանդականների միությունը» հանդես եկավ ընդդիմադիր «Ազգային-ժողովրդավարական կուսակցության» հետ կազմած դաշինքով («Ազգային-ժողովրդավարական կուսակցություն-Ավանդականներ» խմբակցություն), սակայն չկարողացավ հաղթահարել 7%-անոց արգելքը՝ ստանալով ընտրաձայների ընդամենը 2,55%-ը:

«Ազգային-ժողովրդավարական կուսակցությունը» (այսուհետ՝ ԱԺԿ) ստեղծվել է 1917թ.: Վրաստանի խորհրդայնացումից հետո գործունեությունը շարունակել է արտասահմանում, 1981թ. ընդհատակյա պայմաններում վերսկսել է գործունեությունը Վրաստանում: 1988թ. կուսակցությունը, հակազվիադական առաջնորդ Գեորգի Չանթուրիայի գլխավորությամբ, առաջինը հանդես եկավ Վրաստանի անկախության ճանաչման պահանջով: 1994թ. դեկտեմբերի 3-ին Գեորգի Չանթուրիան, որին շատերը Շևարդնաձեի հետնորդ էին համարում, դառնում է ահաբեկչության զոհ:

1994թ. ի վեր ԱԺԿ առաջնորդությունն ստանձնում է նրա կինը՝ Իրինա Չանթուրիան: 2003թ. նոյեմբերի 2-ին նշանակված Վրաստանի խորհրդարանական ընտրություններին Էդ.

Շևարդնաձեի գլխավորած «Հանուն նոր Վրաստանի» դաշինքի կազմում ներկայացված էր նաև ԱԺԿ-ն: Իրինա Չանթուրիան զբաղեցնում էր բավական պատասխանատու պաշտոն՝ գլխավորելով «Հանուն նոր Վրաստանի» դաշինքի նախընտրական շտաբը: 2003թ. նոյեմբերյան ընտրություններից հետո, երբ փաստորեն կազմալուծվեց Շևարդնաձեի գլխավորած «Հանուն նոր Վրաստանի» դաշինքը», Իրինա Չանթուրիան անցավ ներկայիս իշխանությունների ընդդիմության շարքերը:

2003թ. դեկտեմբերի սկզբներին Չանթուրիան՝ ԱԺԿ այլևս նախկին առաջնորդը, ստեղծեց «Նոր ուժ» վերկուսակցական շարժումը, որն իր առջև խնդիր է դրել պաշտպանել Վրաստանը օրհասական սպառնալիքից[1]. նրա խոսքերով՝ երկրում հաստատվել է գործող իշխանությունների դիկտատուրա: Նորաստեղծ շարժման շարքերը հիմնականում համալրել են նախկին նախագահ Շևարդնաձեի համախոհները: Տարբեր լրատվամիջոցներում նույնիսկ լուրեր հայտնվեցին, թե նորաստեղծ շարժման հետևում կանգնած է Շևարդնաձեն:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի, մասնավորապես, ԱԺԿ և «Վրաստանի ավանդականների միության» համագործակցությունը, այն առումով, որ միավորման փորձ են կատարում հակադիր ուժեր. Ասաթիանին համարվում է զվիադական և Շևարդնաձեի ընդդիմադիրներից, այն դեպքում, երբ Ի.Չանթուրիան համալրում էր Շևարդնաձեի գլխավորած դաշինքի ակտիվ ներկայացուցիչների շարքերը: Նրանց համագործակցության հիմքում ավելի շուտ դրված են ոչ այնքան քաղաքական սկզբունքայնությունն ու գաղափարախոսական փոխհամաձայնությունը, որքան իշխանական նախաձեռնությունը: Ավելին, մարտյան ընտրություններին միասնական դաշինքով ներկայանալուց զատ, երկու կուսակցական ներկայացուցիչները, ինչպես արդեն նշվեց, ներառվել են նաև նորաստեղծ «Ժողովրդական ֆորում» շարժման մեջ:

Փորձագետների մի մասը Չանթուրիային համարում է առավել արևմտամետ և հատկապես ամերիկյան կողմնորոշում ունեցող քաղաքական գործիչ: Ըստ որոշ աղբյուրների, նա ֆինանսական աջակցություն է ստանում ամերիկյան և եվրոպական տարբեր հիմնադրամների կողմից: Սակայն ընդդիմադիր առաջնորդի որոշ հայտարարություններ թերահավատություն են առաջացնում այս առնչությամբ: Մասնավորապես, *«Известия»* թերթին 2003թ. դեկտեմբերի 29-ին տված հարցազրույցում նա նշում էր. «*Ամենևին էլ հարկավոր չէ, որպեսզի ողջ տարածաշրջանը (Հարավային Կովկաս – խմբ.) վերահսկվի մեկ գերտերության կողմից (նկատի է առնվում Միացյալ Նահանգները – խմբ.): Մենք փոքր երկիր ենք, և մեզ համար հեշտ է հավասարակշռվել: Իսկ ներկայում Վրաստանը դառնում է գաղութ, ընդ որում՝ առավել ոտնահարված, քան եղել է երբևէ: Դա ապացուցում է Մայլսի* (Վրաստանում ԱՄՆ նախկին դեսպան Ռիչարդ Մայլս – խմբ.) *վարքագիծը: Ծիծաղելի է ու հիմար ինձ*

[1] http://www.kv.com.ua/index.php?rub=219&number_old=3073, «Ирина Саришвили-Чантурия основала движение «Новая сила», 3.12.2003г.

մեղադրել ռուսամետության մեջ, սակայն այն, ինչը կապում է մեզ Ռուսաստանի հետ, չի կարող կապել այլ երկրների հետ»[1]: Իսկ 2004թ. ապրիլի կեսերին Ի.Չանթուրիան հանդես եկավ Վրաստանի իշխանություններին ուղղված պահանջով՝ արգելել արտերկրում, այդ թվում և Իրաքում վրացի զինծառայողների ներկայությունը[2]: Ընդդիմադիր ղեկավարը հայտնի է նաև իր հակառուսական սուր հայտարարություններով: Թերևս տրամաբանությանն առավել մոտ պետք է համարել այն տեսակետը, ըստ որի՝ Չանթուրիան, ի տարբերություն Վրաստանի գործող իշխանությունների, չունի *ընդգծված* արևմտյան և, մասնավորապես, ամերիկյան կողմնորոշում, փորձում է մանևրել Արևմուտք (ԱՄՆ, ԵՄ) - Ռուսաստան հարաբերություններում:

«Վրաստանի սոցիալիստական կուսակցություն». - Վրաստանի քաղաքական դաշտում, ի տարբերություն ԵՄ և առավել ևս՝ Միացյալ Նահանգների, ռուսական ազդեցությունը բավական սահմանափակ է, ինչն, առաջին հերթին, ԱՊՀ տարածքում ռուսական քաղաքական անհաջողությունների արդյունք է: 2003թ. նոյեմբերյան իշխանափոխությունից հետո, երբ ռուս-վրացական հարաբերություններն ընդունեցին առավել լարված բնույթ, երկրի քաղաքական դաշտում ռուսական կողմնորոշում ունեցող թվով քիչ քաղաքական, ինչպես նաև հասարակական ուժերը գործելու առավել նեղ հնարավորություններ ստացան:

Վրաստանյան իրականությունում ռուսական կողմնորոշմամբ առանձնացել է, թերևս, «Վրաստանի սոցիալիստական կուսակցությունը» (հիմնադրվել է 1995թ. մարտին): 2001թ. նոյեմբերի 26-ին կուսակցության ներկայացուցիչներից բաղկացած նախաձեռնողական խումբը Վրաստանում ու Ռուսաստանում կազմակերպեց «Վրաստանը մեր հայրենիքն է, Ռուսաստանը՝ մեր հարևանը» խորագրով ստորագրահավաք՝ երկու երկրների միջև հաստատված մուտքի թույլտվության համակարգի վերացման պահանջով:

2002թ. օգոստոսի վերջին Վրաստանի սոցիալիստներն առաջարկում էին ստեղծել ռուս-վրացական խորհրդարանական խումբ, որը քննելու և վերացնելու էր ռուս-վրացական հարաբերություններում առկա տարաձայնություններն ու խնդիրները: Սոցիալիստական կուսակցությունը՝ Վախթանգ Ռչեուիլիշվիլու գլխավորությամբ (վերջինս Շևարդնաձեի իշխանության տարիներին զբաղեցնում էր երկրի խորհրդարանի փոխնախագահի պաշտոնը), սերտ կապեր ուներ նախկին նախագահ Շևարդնաձեի հետ: Ըստ որոշ աղբյուրների՝ նա համարվում էր վերջինիս քաղաքական հենքը: 2003թ. նոյեմբերյան խորհրդարանական ընտրություններին Սոցիալիստական կուսակցությունն ընդգրկված էր Շևարդնաձեի գլխավորած «Հանուն նոր Վրաստանի» կառավարական *(նախկին իշխանական – խմբ.)* դաշինքի

[1] http://www.izvestia.ru/georgia/42726_print
[2] http://www.newsru.com/world/22dec2004/vivod_print.html, «Грузия вывела своих миротворцев из Афганистана и рассмотрит возможность вывода из Ирака».

կազմում:

Հարկ է նշել, որ եթե Շևարդնաձեի իշխանության տարիներին երկրի ընտրանում վերջինս դեմ չէր տեսնել նաև ռուսական կողմնորոշում ունեցող քաղաքական ուժերի, ապա Սահակաշվիլու պարագայում ընտրանում նման քաղաքական խնդիր ընդհանրապես դրված չէ: Դրա ծավալման դեմ ակտիվ գործունեություն է իրականացվում նաև ընդդիմադիր դաշտում:

Հետևություններ

Վրաստանի ներքաղաքական դաշտում վերջին ամիսներին տեղի ունեցող զարգացումները թույլ են տալիս ամրագրել հետևյալը:

2003թ. նոյեմբերյան իշխանափոխությունը վրացական հասարակությունում առաջ բերեց ակնկալիքներ, որոնք առայսօր չեն արդարացվել: Ավելին, *նորը տեսնելու* ոգևորությունն ու կրքերն արդեն հանդարտվել են, սակայն վրաստանյան այսօրվա իրականությունում, ըստ էության, լուրջ տեղաշարժեր չեն արձանագրվել նախորդ տարիների համեմատ[1]:

Վրաստանի արտաքին քաղաքականությունը շարունակում է մնալ պարզունակ, մեծանում է երկրի կախվածությունը Միացյալ Նահանգներից: Վրաստան են մտնում ամերիկյան ֆինանսական զգալի միջոցներ, որոնք իրականում չեն անդրադառնում հասարակ քաղաքացու կենսապայմանների բարելավման վրա: Ընդլայնվում է *Սահակաշվիլուն ամերիկյան կամակատար* համարող հասարակական կարծիքը, ինչի արդյունքում բնակչության տարբեր խավերում հասունանում է առավել ազգայինը տեսնելու հասարակական պահանջը:

Երկրի ներքաղաքական դաշտում կարելի է սպասել նոր վերափոխումների գործընթացի՝ ընդհուպ մինչև հերթական հեղափոխական ալիքի բռնկումը:

Վրաստանի ընդդիմությունը թևակոխել է կայացման, ուժերի համախմբման և առավել գործնական քայլերի իրագործման փուլ: Ընդդիմադիր դաշտում գործնական քայլերի նախաձեռնողականությամբ առավել աչքի է ընկնում «Վրաստանի Լեյբորիստական կուսակցությունը», որը, թերևս, էական դերակատարում կարող է ունենալ երկրի ընդդիմության գաղափարակից ուժերի միավորման գործընթացում:

[1] Ս.թ. մայիսի 26-ին բրիտանական «*The Financial Times*»-ում լույս տեսավ Վրաստանի նախագահ Մ.Սահակաշվիլու «Ողջ աշխարհի բարեփոխիչների համար հինգ առանցքային սկզբունքներ» խորագիրը կրող հոդվածը: Սահակաշվիլու առաջարկած սկզբունքներից վերջին հինգերորդ կետում նշվում էր. «*Բարեփոխիչները չպետք է հուսադրվեն, որ նրանց կհաջողվի հասարակությունում մշտապես ուրախ տրամադրություններ ապահովել: Նրանք կհամակերպվեն այն մտքի հետ, որ վաղ թե ուշ իրենց ընտրողները կհիասթափվեն, և իրենք ժողովրդի կամքով հարկադրված կլինեն լքել պաշտոնները...*»: Հոդվածը մեծ արձագանք գտավ տարբեր լրատվամիջոցներում. մասնավորապես լուրեր էին պտտվում իշխանությունից Սահակաշվիլու վաղաժամկետ հեռանալու մասին (տե՛ս http://www.inosmi.ru/translation/219890.html/):